


20017

14



1913

372

5-81

ՓՈԽ-ԹԵՄԱԿԱԼ եՐեխանի թեմի եկեղեցական  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻՆ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ  
ՀԱՅՈՅ ԵՐԵՒԱՆԱՅ

Թ. 3 4 8 0

, 8,, Նոյեմբերի 1913 թ.

Երևան:

Դպրոցական գործերում նկատւող թերու-  
թիւններն աստիճանաբար վերացնելու հա-  
մար՝ թեմական իշխանութիւնը ժամանակին  
ուղարկել է հոգաբարձական և ուսուցչա-  
կան մարմիններին շրջաբերականներ, որոնք  
բղիսել են իր ուսուցած տեղեկութիւններից  
և թեմական աեսուչների դիտողութիւն-  
ներից և զեկուցումներից:

Այս անգամ թեմական իշխանութիւնու տա-  
լիս է մի նոր շրջաբերական, որն իր ման-  
րամասն հրահանգներով հետեանք է թեմիս-  
եկեղեցական ծխական գպրոցների 1911—  
1912 և 1912—1913 ուսումնական տեղե-  
կագրերում ամփոփուած այն մտքերի ու  
ցանկալի բարեփոխութիւնների, որոնք ար-  
տացայտուած են եղել թեմական աեսուչների  
կողմից:

372

5-81

2010

Աւղարկելով այն գրքոյից թեմիս եկեղեցական ծխական  
դպրոցների հոգաբարձրական և ուսուցչական կազմերին,  
առաջարկում եմ պահել գպրոցի գործերում և համաձայն  
առաջադրուած հրահանգների, առաջ տանել գպրոցական  
գործը:

Փոխ-Թեմակալ Երեսանի՝ ԽՈԲԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՅ

## ՄԵՆԿԱՎԱՐԺԵԿԱՆ ՀՐԵՍԵԴԳՆԵՐ

Երևանի թեմի հայոց եկեղեցական ծխական դպրոց-  
ներում արած զիտողութիւններն ու կատարած փորձերը  
ցոյց տիին անցած երեք ուսումնական տարում (1910/13),  
որ այսուհետեւ էլ գրաւոր ու բանաւոր աշխատանքները  
պէտք է առաջ գնան հետեւել կերպով:

### ԳՐԱՀԱՌՆԵՐ

#### 1. ՏԵԾՔԱԿՆԵՐ

ա. Առաջին բաժանմունքից սկսած բոլոր դասարան-  
ներում պէտք է գործածել լեզուների ու թւարանութեան  
համար միտուանի տեսրակնելի:

բ. Նկարչութիւնը պիտի կատարել անողոյ տեսրակի  
վրայ:

#### 2. ԳՐՈՒԹԵԱՆ ԶԵԽԵԲՔ

ա. Իռաջին բաժանմունքում՝ տարւայ սկզբին 4—6  
շաբաթ տևող չ. լեզւի նախապատրաստական շրջանում  
բանաւոր վարժութիւններին կից պիտի առաջ գնայ նկար-  
չական կամ էլեմենտների գրութիւնը, որպէսզի գրել—  
կարգալու գործն սկսելիս երեխանները նախապատրաստ-  
ած լինեն գրութեան համար:

բ. Այս բաժանմունքում հենց սկզբից գրչով սկսեն  
թէ էլեմենտները, և թէ բուն գրութիւնը:

գ. Ետածին բամբի աշակերտ-աշակերտունինը պէտք է գրեն նիմանկան գծելով եռ անջատ (հաստ-հաստ). տառերը չսիրոի վերջանան մազականութեալ, որպէսզի նրանց պատկերները լինեն որոշ և անշփոթ:

դ. Երկրուդ բաժանմունքում՝ գրութիւնը պէտք է լինի գարձեալ անջատ, միայն երեխաների վարժւած լինելու պատճառով տառերը վերջանում են մազական զծերով:

ե. Երկրուդ բաժանմունքում երեխաները արգէն այնքան վարժւած են գրութեան մէջ, որ առանց գրչի ընդհատման գրում են որոշ տառեր (բ, գ, դ, ե, թ, ի, լ, տ, ը, փ, ֆ) երկտակ: Ուստի III բաժանման գրութիւնը սիրոի լիսի նկատակ, որ երեխաները բնականօրէն առաջացած արագագրութեան մէջ արգելքների չպատճենով աւելի վարժւեն:

Համկանալի է, որ այս աստիճանում՝ երկտակ գրութեան մէջ տառերը վերջանում են մազականութեալ և գրում են անջատ:

զ. Չորրուր բաժանմունքում երկտակ գրութիւնը շարունակում է և կամաց կամաց կարող է հասնել տարւայ վերջին կից գրութեան, որ չափազանց կարիոր է արագագրութեան համար:

Դրութեան այս ձեր պահպանում է յաջորդ բարձր բաժանմունքունքում նու:

է. Ռ. Լեզուն ըստ ծրագրի սկսում է II բաժանմունքում, առաջին կիսամեակին բանաւոր, իսկ երկրորդ կիսամեակից անցնում են գրել-կարգալուն:

Առաջին կիսամեակի բանաւոր վարժութիւններին գուգընթաց պէտք է միտողանի տետրակների վրայ գրել տալ Ռ. լեզուի գրութեան ոգուն համապատասխան էլէմենտներ, որը թէ կը նախապատրաստէ ուսւսերէն գրութեան, և թէ ընդհանրապէս գեղեցիկ գրութեան համար:

ը. Երկրուդ բաժանմունքում պիտի գրեն ուռունեալ անջատ (հաստ-հաստ), որպէսզի տառերը չշփոթեն միմեանց հետ:

թ. Երկրուդ բաժանմունքում կարող են հասնել կից գրութեան:

### ՅԱՅՈՅ և ՌՈՒՍՈՅ ԼԵԶԻՒՅՅ ԳՐԱԿՈՐՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

ա. Ուղղագրութիւն զարգացնելու ամենալաւ միջոցն է ձեռագրից զիտակցական ալտագրութիւնը՝ հիմնած որևէ քերականական կանոնի վրայ: Այս ձեռի արտադրութեանը պէտք է լայն տեղ տալ հայոց լեզուի համար II բաժանմունքում պիտի մարզը, իսկ ուսւսերէնի համար III բաժանմունքից սկսած:

### ԴԱՍԱՐԱՄՆԱԿԱՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ.

II I բաժանմունքում սկսած պէտք է տալ հայերկա շարադրութիւնն ձեսփոխւող ու պարզ շարադրական պատկերներից և ապրած նիւթերից. Տոյն բանը պիտի շարունակւի IV և V բաժանմունքներում:

Փողձը ցոյց է տւել որ III, IV և V բաժանմունքներում չի յաջողւում սովորած յօդւածի և կամ պատմածքի բովանդակութիւնը գրի առնել. մինչդեռ շարադրական պատկերներից ու ապրած նիւթերից երեխաները շարադրում են ինքնուրոյնաբար, իրենց հասկանալի բառերով ու մտքերով և ստեղծագործական թափով:

զ. V բաժանի վերջում և VI բաժանմունքում վերև յիշւած շարադրական նիւթերին զուգընթաց պիտի տալ շարադրելու սովորած յօդւածի բովանդակութիւնը և տիպերի նկարագրութիւնը թանական լգով և հետգիտէ հասնել ինքնուրոյն շարադրութիւնների:

գ. Շարադրական նիւթերի քանակը մօտաւորապէս լինելու է՝

III ու IV բաժ. ուսում տարւայ ընթացքում գրելու  
են 10—12. ական շարադրութիւն

V ու VI բաժ. ուսում. տարւայ ընթացքում գրելու  
են 15—18-ական շարադրութիւն։

Ե. Ոռուսաց լեզուից շարադրութիւնը պիտի սկսել շարադրական պատկերնենուվ V բաժանմունքից։

Պ. Թնդաստիութիւնը ըսկոր և լինի ուղղագրութիւն սովորեցնելու միջոց, այլ նա պիտի գործադրւի երբեմնապէս՝ սուուգութեան համար։

Հ. Առհասարակ գրաւոր աշխատանքները պիտի գրաւեն լայն տեղ և առաջ տարւեն բանաւորին հաւասար։\*

#### 4. ՆՎՅՐՉՈՒԽԹԻՒՆ

Արտանկարելը միանգամայն պիտի դուրս կանել. ընդհակառակը պիտի տուաջ տանել նկարչութիւնը իրականից և յիշողութեամբ անտող տեսրակի վրայ։

Ցանկալի է առաջին բաժնից սկսած փոքր բաժանւ մունքներում գունաւոր մատիտների գործածութիւնը, իսկ բարձրում՝ ջրաներկի։

Այս ձեփ նկարչութիւնը զարդացնում է երեխաների մէջ աշքի ու ձեռքի չափը, դիտողականութիւնը. կրթում է նրանց ճաշակը և պահում վառ հետաքրքրութեան մէջ, ուրիշ կերպ լինել չի կարող, որովհետև երեխաներն իրենց

\*Ծանօթ. 1. Ցանձնաբարում է կարդալ 1913 թ. նոր Դպրոցի № 2 և 6-ի մէջ „Քրաւոր աշխատանքները մեր գպրցում” և „Ուղղագրութիւնն ու շարադրութիւնը մեր գպրցում” յօպածները։

2. Թ. լեզուի համար որպէս ձեռագիր օրինակներ (գիտակցական արագրութեան նպատակվ) յանձնաբարում են։

Տպումն, Առաջ գրատու 1. Վայուսէ 11—12 բաժ. համար  
,, , , , II Վայուսէ V—VI բաժ. համար

դիտածն ու սովորածը թէ իրականից և թէ յիշողութեամբ նկարելիս, հրապարակ են բերում մանկական անհատական ստեղծագործող ոգի և մտաւոր ու գեղարվեստական մեծ բաւականութիւն զգում։

#### ԲԱՆԱՀՈՐՆԵՐ

ա. Ոչ մի բան չպիտի հիմնւի լոկ խօսքի վրայ. ամեն մի դաս պէտք է լինի շօշափելի և առարկայական։

Երեխաները դասի ժամանակ ոչ թէ կրաւորական (պաստիւ), այլ ներգործական (ակախիւ) ու ստեղծագործական վիճակում պէտք է լինեն. տւած փաստերի, արած գիտողութիւնների և ակսած փորձերի հիման վրայ՝ օրէնքներն ու եղրակացութիւնները պէտք է դուրս բերեն իրենք աշակերտ-աշակերտութիւնը։

բ. Անհատական ու խմբական ընթերցանութիւնը պէտք է լինի բնական առողջանութեամբ և ոչ թէ երգելով։

գ. Պիտի ուշք դարձնել, որ կարգալիս է ական բայերը շըաժանեն, այլ միացած կարգան իրենց վերաբերող մասերի հետ. օրինակ, ասում են, բերում ենք և այն։

դ. Զափածոյ ընդարձակ գրւածքները անհրաժեշտ չեն, որ անպատճառ անգիր անհեն։

ե. Ցօդւածի բովանդակութիւնը և առհասարակ դասը պատմելիս պէտք է հետեւ, որ երեխաները պատմեն ինքնուրոյնաբար և ոչ թէ գրի բառերով և կամ բոլորովին գաւառաբառառով։

գ. Դասատուները նոյնպէս պիտի խիստ կերպով հետեւ իրենց լեզուի և ոճի յասակութեանը։

է. Ռուսերէնն անցնել իրազննական կերպով և թարգմանութեան դիմել միմիայն անհրաժեշտ դէպում։

ը. Թւաբանական խնդիրներ վճռելիս գործադրել և

անալիտիկ, և սինտետիկ մեթոդ։ հայութա ու մեջազգ  
թ. Հայրենագիտութիւն, աշխարհագրութիւն և բնաւ  
գիտութիւն անպատճառ անցնել դիտողութիւններով ու  
փորձերով։

Ժ. Երկրաչափական ձևագիտութեան դասերին դիտած  
ու սովորած երկրաչափական մարմինները՝ յաջորդաբար  
իւրաքանչիւր դասինը առանձին՝ պէտք է ամբողջ դասա-  
րանը տանը պատրաստէ ստուարաթղթից (կարտոնից)  
կամ փայտից և դասի ժամանակ բոլոր երեխաները պիտի  
ունենան իրենց ձեռքի տակ։

Ժա. Իւրաքանչիւր բաժանմունքում շաբաթը մի  
անգամ պէտք է լինի դասարանական ընթերցանութիւն,  
որի ժամանակ դասաւուն կարգալու է բաժանմունքին  
համապատասխան որևէ դիրք։

Աշակերտութիւնը գրքի բովանդակութիւնը պատմե-  
լուց յետոյ՝ դասաւի դեկադարութեամբ պիտի համնի  
նրա իմաստին։

Աշակերտութիւնը գրքի բովանդակութիւնը պատմե-  
լուց յետոյ՝ դասաւի դեկադարութեամբ պիտի համնի  
նրա իմաստին։

Աշակերտութիւնը գրքի բովանդակութիւնը պատմե-  
լուց յետոյ՝ դասաւի դեկադարութեամբ պիտի համնի  
նրա իմաստին։

## ԿՐԹԱԿԱՆ-ՎԱՐՉԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

I. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՇԻԵՄՍՏԵԱՆՆԵՐ, ԳՈՐԾԵՐ, ՆԻՍՏԵՐ  
ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՇԻԵՏԻՈՒԹԻՒՆ

1. Հոգաբարձութիւնը պարտաւոր է ունենալ.

ա. Եկամուտքի մատեան, ուր ամսաթերով պէտք է  
գրւեն դպրոցական մուտքն ու ելքը։

բ. Գոյքի մատեան (ինվէնտար), ուր պէտք է նշա-  
նակւեն դպրոցական կահ-կարասին, դասական պարագա-  
ները (քարտէզներ, պատկերներ և այլն) և գործերը։

գ. Հոգաբարձական նիստերի արձանագրութեան մա-  
տեան։

դ. Դրագարանի ու ֆիզիկանոցի ցուցակներ։

2. Հոգաբարձութիւնը և մանկավարժական խորհուրդը  
պարտաւոր են թեմական իշխանութիւնից և ուրիշ հաս-  
տատութիւններից ստացած թղթերը և իրենց գուրս թո-  
ղած դրութիւնների պատճէնները՝ իւրաքանչիւր տարւանը  
՚ի մի հաւաքած ու կարած պահել դպրոցում առանձին  
առանձին՝ որպէս հոգաբարձական ու մանկարժական խորհուրդի գործել։

3. Հոգաբարձական ու մանկավարժական մարմին-  
ներն առանձին առանձին պէտք է առնւազն երկու շա-  
բաթը մի անգամ հերթական նիստ ունենան և արձանա-  
գրեն իրենց մատեաններում։

4. Հոգաբարձութիւնը պարտաւոր է ուսումնական  
տարւայ վերջին հրապարակով հաշիւ ներկայացնել ծխա-  
կաններին դպրոցի տնտեսականի մասին, իսկ աւագ ուսու-  
ցիչը կամ տեսուչը՝ ուսումնականի մասին։

II. ԱՇԽՍԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
ՄԷՋ

1. Հոգաբարձութիւնը իր միջից պիտի ընտրէ նաև խագահ, գանձագահ և քարտուղար—հաշւապահ՝ աշխատանքը բաժանելու և կանոնաւորապէս առաջ տանելու համար:

2. Գիւղական շատ դպրոցներում կարիքն ստիպում է և այդ պատճառով էլ հարկը պահանջած դէպքում պէտք է քարտուղար—հաշւապահի պաշտօնը կատարէ դաստուն, որն իբրև աւագ-ուսուցիչ, մասնակցում է հոգաբարձական նիստերին:

3. Հոգաբարձութիւնը պարտաւոր է ինչպէս դպրոցական, այնպէս էլ եկեղեցական ել և մուտքի վրայ հրակել և հաշիւները կանոնաւորապէս պահել մատեաններում:

III. ԴԱՍՍԿԱՆ ՊԻՏՈՅՔՆԵՐԸ ԺԱՏՐԱՍՏԵԼ

Հոգաբարձութիւնը կամ ուսուցչական մարմինը մանկավարժական խորհրդի որոշած դասագրքերը, տետրակները և այլ գառական պիտոյքները պէտք է ժամանակին բերել տայ, որ ուսումն սկսելիս ամեն բան պատրաստ լինի:

Այս մասին առանձին հոգատարութիւն պէտք է ունենան մանաւանդ գիւղական դպրոցները:

IV. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՏԵՏՐԱԿԱՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՆ ՈՒ ՊԱՀԵԼ

1. Ամեն դպրոց պէտք է ուղարկէ թեմական իշխանութեանն իր շըջանի գործակալի միջոցով իւրաքանչիւր բաժանման երկու լաւ, երկու բաւարար և երկու թոյլ

աշակերտ—աշակերտունու տետրակները՝ սկզբից մինչև վերջը բոլոր առարկաներից տարեկան երկու անգամ՝ ա.) նոր արւայ, արձակուրդին և բ.) ուսումնական արւայ վերջին:

2. Տետրակների վրայ պիտի դրսի նաև գպրոցի անունը և այն, թէ քանիելլուրդ տալին է, որ աշակերտ կամ աշակերտունին սովորում է և այդ բաժանմունքում մնացել է, թէ ոչ:

3. Գպրոցը պէտք է առնասարակ ինամքով պահպանէ աշակերտ—աշակերտունիների վերջացրած տետրակները բոլոր առարկաներից և պահանջւած գէպքում դպրոցական վարչութիւններին ներկայացնէ:

4. Ամառւայ արձակուրդներն սկսելիս դպրոցում պահւող աետրակները պիտի բաժանւեն տէրերին, միայն իւրաքանչիւր բաժանման մի լաւ, մի բաւարար և մի թոյլ աշակերտ—աշակերտունու տետրակները՝ սկզբից մինչև վերջը՝ բոլոր առարկաներից պէտք է վերցնել ու պահել դպրոցական գործերի մէջ:

V. ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ ԵՒ ԱԽՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԻՏՈՅՔՆԵՐ

1. Իւրաքանչիւր դպրոցի հոգաբարձութիւն ամեն տարի պարտաւոր է որոշ գումար յատկացնել դպրոցական զրագարանին ուսումնական պիտոյքների համար (Փիզիքական, քիմիական, բնագիտական և այլն):

2. Անհրաժեշտ է ստանալ մանկական պարբերական թերթեր:

3. Հսարաւոր գէպքում ցանկալի է կազմել նաև ուսուցչական զրագարան:

4. Պէտք է անպայման ստանալ մանկավարժական թերթեր:

VII. ՎերՍՏՈՒԿՈՒՄՆԵՐ

Ծխական դպրոցներում տարեկան վերջնական քննութիւնների փոխարէն լինելու են վերստուգումներ:

Վերստուգումներ պէտք է լինեն ուսումնական տարւայ ընթացքում երեք անգամ՝ երկուուր տարւայ մէջ՝ իսկ մէկը տարեվերջում:

Վերստուգումները պէտք է տեղի ունենան երկու եղանակով. ա) մէկից աւելի դաստարներ ունեցող դպրոցներում տեսչի, աւագ-ուսուցչի և յարմարաւոր դէպքում՝ վերստուգուղ առարկաների հետ առընչութիւն ունեցող դաստարների ձեռքով. բ) մի դաստուն ունեցող զըպրոցներում բաւականանալ ուսուցչի վերստուգումով:

Իւրաքանչիւր վերստուգութեան ժամանակ տեսուչը կամ աւագ-ուսուցիչը պարաւոր է վազօրօք այդ մասին յայտնել հոգաբարձութեանը, խնդրելով նրա ներկայութիւնը:

Վերստուգման ժամանակ պէտք է պատրաստ լինեն աշուկերտ-աշակերտուհների գնահատութեան ցուցակը և անցած նիւթի ծրագիրը:

Վերստուգումները պէտք է կատարվեն անցած նիւթերի շրջանում, ամփոփ հարցմունքներով՝ ուղղւած ամբողջ դաստարներին:

Լեզուներից և մատեմատիքական առարկաներից բանաւոր վերստուգումների հետ միասին պէտք է կատարվեն նաև գրաւոր վերստուգումներ. Վերստուգումների արդիւնքը՝ պէտք է արձանագրվի և վաւերացվի վերստուգուների կողմից:

Տարեվերջի վերստուգումները՝ թէ բանաւոր, և թէ գրաւոր՝ լինելու են աւելի ընդհանուր ան-

ցածից:

VII. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՔԲԻԿ ԴԵՂԱՏՆԵՐ ԵՒ ԲԺԻՇԿ

1. Իւրաքանչիւր դպրոց պէտք է ունենայ փոքրիկ գեղատուն, որպէսզի կարողանայ անհրաժեշտ ու անմիշական բժշկական թեթի օգնութիւն հասցնել աշակերտութեան, մինչև որ հնարաւոր ու կարենոր դէպքում բժշկի դիմւի:

2. Գիւղական շատ դպրոցներ զուրկ են հնարաւորութիւնից բժշկական հոկոզութիւն ունենալու. բայց ուր կարելի է պէտք է օգտւին:

3. Քաղաքի դպրոցը պէտք է ունենայ իւր բժիշկը, որպէսզի տարեկան մի կամ երկու անգամ ընդհանուր բժշկական քննութեան ենթարկէ աշակերտ-աշակերտութիւներին. նա պիտի օգնութեան համար հիւանդներին, վարակիչ հիւանդութիւնների ժամանակ խիստ նետեղութիւն ունենայ. շաբաթական մի անգամ դպրոց յաճախիչ՝ աշակերտութեան առողջութեանն ու դպրոցում տիրող առողջապահական կողմերին վերահսկելու և հարկ եղած խորհուրդները տալու:

4. Որ քաղաքում մէկից աւելի դպրոցներ կան, կարող են միացած ոյժերով պահել մի բժիշկ:

5. Դպրոցը պէտք է հետեւի և միջոցներ ձեռք տանէ, որ աշակերտութիւնը՝ հնարաւորութեան չափ՝ լինի առողջապահիկ պայմաններում և գոնէ բաւարար սնունդ տանայ:

6. Աշակերտութեան հագուստը պէտք է լինի վայելուչ ու կանոնաւոր այնպէս, որ պաշտպանէ կիմայական վատ ազգեցութիւններից և այլ հակառողջապահական վնասներից:

VIII. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻ

1. Կանոնաւոր ուսումն պէտք է սկսել սեպտեմբերի մէկից և վերջացնել յունիսի մէկին:

2. Դասատուները ժամանակից առանց թոյլ տւութեան իրաւունք չունեն թողնելու իրենց պաշտօնատեղին:

IX. ԴԱՍԵՐԻ ՏԵԽՈՂՈՒԹԻՒՆԸ

1. Առաջին, երկրորդ և երրորդ ժամերին դասերի տևողութիւնը պիտի լինի 50-ական րոպէ, իսկ չորրորդ ու հինգերորդ ժամին՝ 45-ական րոպէ:

2. Միացեալ բաժանմունքներ ունեցող դպրոցներն էլ պէտք է առաջնորդւեն նոյն չափերով:

X. ԴՊՐՈՑ, ԸՆՏԱՆԻՔ, ՀԱՆԴԵՍՆԵՐ ԵՒ ԶԲՈՍԱՆՔ

1. Դպրոցի ու ընտանիքի յարաբերութիւնը ուժեղացնելու և ծնողների ուղարտականութիւնները պարզելու համար՝ անհրաժեշտ է ոյժ տալ ծնողական ժողովներին ու ծնողական երեկոյթներին. ամեն անդամ որոշ դասախոսութիւններով պիտի բացարել դպրոցի և ընտանիքի սերտ կապակցութեան նշանակութիւնը:

2. Նոյնպէս անհրաժեշտ է ունենալ դպրոցական հանդէմներ, գրական երեկոյթներ և ներկայացումներ:

3. Դիտողութիւնների և դասերին վերաբերող մատչելի ուսումնամիրութիւնների համար կարեւը է յաճախ կատարեան դպրոցական փոքրիկ զբօսանքներ, իսկ արձակուրդներին՝ հարաւոր դէպքում՝ մեծ զբօսանքներ:

XI. ԱՐՁԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Նոր տարւայ ու ծննդեան տօների համար պէտք է արձակել գեկտեմբեր 24-ին և ուսումն վերսկսել յունշար 8-ին:

2. Բարեկենդանին պէտք է արձակել վարդանանց տօնի նախանթաց օրը և ուսումն վերսկսել մեծ պասի առաջին շաբաթւայ երկուշաբթի օրը:

3. Զատկին պէտք է արձակել՝ աւագ շաբաթւանից սկսած երկու շաբաթ:

XII. ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ամեն կերպ աշխատել վարքի պատճառով աշակերտ չարձակել դպրոցից: Շատ բացառիկ դէպքերում, երբ ամեն տեսակ մանկավարժական միջոցներ գործադրւած են և հնարաւոր չի եղել ուղղել, այն դէպքում հոգաբարձական ու մանկավարժական խառը ժողովում ձայների բաղմութեամբ որոշել արձակել և պատճառաբանւած բացարութիւն տալ թեմական առաջնորդին կամ թեմական տեսչին:

2. Ամեն կերպ աշխատել հնարաւոր միջոցների դիմել, որ աշակերտ-աշակերտունիները երրորդ տարին չմնան դասարանում. հակառակ դէպքում, եթէ նա հիւանդ չէ, թողնել հոգաբարձական և մանկավարժական խառն ժողովի բարեհայեցողութեան (երրորդ տարին թողնել դասարանում, փոխել հեակեալ դասարան կամ արձակել):

XIII. ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼԸ

Մանկավարժական ու վարչական գանագան խնդիր-

ների նկատմամբ պարզաբանութիւններ ստանալու համար  
կարելի է դիմել թեմական իշխանութեանը կամ թեմա-

կան տեսչին։ Վահան Առաքելյան առ աշխարհ որի ։

— առ անձնագիր առ աշխարհ որի ։

#### XIV. ՈՒՍՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասաւանդելիս դպրոցը ձեռքի տակ պիտի ունենայ  
ուսման պարտադիր ծրագիրը (տպւած Ս. Էջմիածնում  
1910 թ.) և նրան հետեւ։

Կամաց առջև նշում առ աշխարհ որի ։



2008

2013



2002

